

**ԴԵՊՐԻՎԱՑԻԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՏԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԸ**

Հողվածում դիտարկվում է, թե ինչ է հոգեկան դեպրիվացիան և ինչպիսի ազդեցություն է ունենում մանկատան երեխաների հոգեկան և ֆիզիկական զարգացման վրա:

Հոգեբան Ջ. Ռոբերտսոնը ուսումնասիրել է մինչև մեկ տարեկան երեխաներին, և արդյունքները ցույց են տվել, որ նրանք կամ անտարբերության են մատնում մեծահասակներին, կամ էլ կարող են յուրաքանչյուր մարդուց պահանջել սիրո, ուշադրության զգացմունքներ: Գիտնականը գտնում է, որ անգամ նորմալ երեխան, երբ որոշակի ժամանակով բաժանված է լինում ծնողներից, նրա մոտ նույնպես նկատվում է ճնշվածություն: Երբ նա վերադառնում է տուն, այդ ամենը թուփափայտ չի վերանում, նորմալ փոխհարաբերությունների համար հարկավոր է լինում ժամանակ: Իսկ եթե մայրական հոգատարությունը շարունակում է բացակայել, ապա խախտումները ավելի են խորանում, որը նկատվում է մանկատան բոլոր երեխաների մոտ: Ջ.Ռոբերտսոնը և Ջ.Բոուլբին ուսումնասիրելով մանկատանը գտնվող 18-24 ամսական երեխաներին, որոնք բաժանվել են մայրերից հենց այդ տարիքում, առաջարկում են վարքային հետևյալ 3 փուլերը.

1. Բողոքի փուլ - այս փուլում երեխան բղավում է, կանչում մորը և սպասում, որ նա կմոտենա իրեն, կբավարարի իր պահանջմունքը:

2. Մորը մերժելու փուլ - երբ երեխան ճնշում է իր զգացմունքը մոր հանդեպ կամ էլ այդ զգացմունքը ուղղում է դեպի այն անձը, որը հոգ է տանում իր մասին:

3. Եթե հոգատար անձը ընդհանրապես բացակայում է, ապա այդ դեպքում, երեխան անտարբեր է դառնում մարդկանց հանդեպ և ուշադրությունը ուղղում է դեպի առարկաները:

Այս փուլերի տևողությունը երեխաների մոտ տարբեր է լինում: Որոշ գիտնականներ գտնում են, որ եթե երեխան հասել է երկրորդ կամ երրորդ փուլերին, ապա նրա մոտ տեղի է ունենում ադապտացիա տվյալ վիճակի հանդեպ: Ջ. Լանգմեյերը գտնում է, որ դա ճիշտ տեսակետ չէ, քանի որ, երբ երեխան անցնում է ճգնաժամային երեք փուլերը, այդ ամենը բացասական

ազդեցություն է ունենում երեխայի հոգեկան և ֆիզիկական հետագա զարգացման վրա:

Եթե երեխայի բաժանումը մորից և ընտանեկան միջավայրից ուղեկցվում է արտակարգ հոգեկան վիճակներով, ապա երեխայի վարքում նկատվում են արտասովոր փոփոխություններ, երբ նա վերադառնում է ընտանիք (կամ ընտանեկան հոգածությունը փոխարինող միջավայր):

Ձ.Ռոբերտսոնը հետազոտել է երեխաների վարքը, որոնք ընտանիք են վերադարձել հիվանդանոցից: Այն երեխաները, որոնք դեռևս չէին հասել անտարբերության ու դեռևս գտնվում էին բողոքի փուլում, արտահայտում էին սեպարացիոն լարվածություն: Նրանք հավում էին մորը ավելի ուժգին, քան առաջ, հետևում էին նրան ամենուրեք: Նման տեսարան դիտվում էր այն դեպքերում, երբ երեխայի և մոր միջև գոյություն ունեն լավ փոխհարաբերություններ ու բաժանումը կարճատև է լինում: Որոշ երեխաների մոտ վարքային լարվածություն դիտվում է անմիջապես տուն վերադառնալուց հետո, իսկ մյուսների մոտ՝ որոշակի ժամանակ անց, իսկ մինչ այդ նրանք պարփակված էին ու մեծամասամբ լռում էին՝ խոսակցությանը չմասնակցելով: Նույնիսկ կարճատև բաժանումը նախադպրոցականները ավելի դժվար էին տանում, քան մյուս տարիքի երեխաները: Եվ Ձ.Ռոբերտսոնը գտնում է, որ նրանց ավելի երկար ժամանակ է պետք վերաադապտացվելու համար:

Հոգեբան Ու. Գոլդֆարբը իր առջև խնդիր է դնում. արդյո՞ք անուղղելի են հոգեկան զարգացման խախտումները, որոնք տեղի են ունենում փոքր և նաև մեծ տարիքում: Օգտագործելով կատամենտիկ մեթոդը՝ նա համեմատում է երկու խումբ երեխաների, որոնք տարբերվում են միմյանցից մեկ կողմով՝

1. Նրանք, որոնք ի ծնե ապրել են խնամակալների մոտ;

2. Նրանք, որոնք ի ծնե ապրել են մանկատանը և այնտեղ գտնվել են մինչև երեք տարեկանը:

Նորմալ ժառանգականություն դիտվել է մանկատան երեխաների մոտ և ոչ բարենպաստ՝ խնամքի տակ գտնվող երեխաների մոտ, քանի որ նրանց մայրերը ունեցել են ժառանգական հիվանդություններ, որի պատճառով չեն կարողացել պահել երեխաներին և հանձնել են խնամակալներին: Պարզվել է, որ մանկատան երեխաները ունեցել են ֆիզիկական լավ տվյալներ, բայց ինչ վերաբերվում է մտավոր զարգացման աստիճանին, ապա այն բավականին վատ վիճակում էր գտնվում, քան խնամքի տակ գտնվող երեխաներինը: Եվ

հենց այստեղից է գալիս այն գաղափարախոսությունը, որ ավելի լավ է վատ ընտանիք, քան ամենալավ մանկատունը:

Հոգեբաններ Ռ.Ա.Շպիցը և Ջ. Դ. Բեկուինոն իրենց կատարած հետազոտություններից եկել են այն եզրակացության, որ եթե երեխային պետք է հիվանդանոց պառկեցնել վիրահատության համար, ապա դա պետք է կատարել մինչև յոթ ամսական հասակը (օրինակ ի ծնե անոմալիաների դեպքում): Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անգամ վատ ընտանիքներում ապրող երեխաների խոսքը ավելի լավ է զարգացած, քան մանկատան երեխաներինը:

Կ.Պրինգլը և Լ.Բեսլոուն համեմատում են լավ և վատ հարմարվող երեխաներին, և գալիս եզրակացության, որ այն երեխաները, որոնք չեն հարմարվում այդ պայմաններին հոգեպես դեպրիվացված են և ցանկալի չեն հենց սկզբից, չի եղել կայուն հուզական կապ մեծահասակների հետ: Իսկ նրանք, ովքեր թեկուզև գտնվել են մանկատանը և հարմարվել են այդ միջավայրին, ակտիվ փոխհարաբերությունների մեջ են գտնվում անձնակազմի, բարեկամների հետ և սիրելի են բոլորի կողմից: Այսինքն նրանք գտնում են, որ սեպարացիան անպայման չէ, որ առաջացնի հուզական և մտավոր խախտումներ: Ամբողջը կախված է անձնային կապերի որակից, և իհարկե, անհատի հատկություններից:

#### Գրականություն

1. Ершовой Н.М. (ред) -Воспитание детей в неполной семье. Москва, Прогресс,1980г.
2. Исаев Д.Н.- Психическое недоразвитие у детей. Ленинград, Медицина,1982г.
3. Й. Лангмейер, З. Матейчек — Психическая депривация в детском возрасте. Авиценум. Медицинское издательство; Прага,1984.